

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 55 - Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի ,,բ,, ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշումը

Կարգադրում եմ՝

1. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝
- Պողոսյան Ն. – մարզպետ, հանձնաժողովի նախագահ
 - Հովհաննիսյան Վ. – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
 - Ստեփանյան Է. – մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ
 - Կրոյան Բ. – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
 - Մելքոնյան Վ. – ՀՀ գյուղատնտեսության նախարարության ,,Գեղարքունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն,, ՓԲԸ տնօրեն /համաձայնությամբ/
 - Մկրտչյան Ա. – ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/
 - Ստեփանյան Հ. – ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության էներգետիկայի պետական տեսչության Հյուսիսային միջմարզային բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/
 - Սողոմոնյան Ս. – ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/
 - Բարսեղյան Ա. – ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿ պետական կոմիտեի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ /համաձայնությամբ/
 - Հազեյան Ն. – ՀՀ մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Կոտայքի և Գեղարքունիքի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/
 - Ղուրշուդյան Մ. – մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007թ. հուլիսի 6-ի „Մարզի համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող հանձնաժողով ստեղծելու մասին,, թիվ 55-Ա կարգադրության 1-ին կետը:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ